Փոխնջը ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի։

Տարեկան բաժանորդագինն է երիս եւ կէս արծաթ Մեճիտ կանխիկ վճարելի, թէ՛ մայրաքաղաքիս եւ իւր արուարձանաց եւ թէ՛ գաւառաց համար։

վեց եւ երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի։

Տեղական եւ գաւառական բդրատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ։

Հատը 40 փարայ է, եւ կը գտնուի մասնաւորապէս Պանճէ-Գարու չրավաճառ եւ գրավաճառ Պօղոս եւ Յակոբ աղայից խանութները։

ՓՈՒՆՋ

Ծանուցման տողը 3 դուրուշ է մէկ անգամի համար։ Աւելի ածան կընդայ աւելի անգամներու համար։

Խմբագրութեան վերաբերեալ որ եւ է գիր ուղղելի առ Տճօրէն-Տեր Հ. Ե. Ալատճատեան կ. Պոլիս Պալըզ-բազար Նաֆիյէ խան վերի յարկ թիւ 16։

ADRESSE'
H. S. ALADJADJIAN
Directeur du journal Arménien Pountch
—16 Nafié-Han, Balouk-Pazar 16—
CONSTANTINOPLE

ԹԻՒ 2444 ՇԱԲԱԹ 1888 ՕԳՈՍՏՈՍ 13

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓՈՒՆՋԻ

Ծայրագոյն Ծանրագնռունեան մը։ – Մեր քառորդդարեան լրագրուհեան շրջանին մէջ դրեթէ երբեք տեղի ունեցած չէր այնչափ ծայրագոյն յանդգնութիւն, որով ընդդէմ Պատրիարքարանի սանձարձակ կը վարուի այժմ կրօնական ժողովոյ անդամ մը՝ Վահան վրդապետ պարտիզակցի։ Սա՝ յետ բաղում երկանց ծնեալ Խօսնականուն կրօնական (պաշտօնական) Հանդիսին դաշտարան պատճառ կը լինի ի մեծ խայտառակութիւն Հայաստանեայց կղերին, և առանց բնաւ ամաչելու կելնէ կը հրատարակէ Սոխակ անունով թերթ մը իբրեւ շարունակութիւն Խօսնակի։ Կրօնական ժողովը ի պաշտօնէ կը հրատարակէ թէ Սոխակը չկրնար Խօսնակի շարունակութիւնը լինել. բայց Վահան վրդապետ դարձեալ առանց ամաչելու կը շարունակէ քան առաջնոյն. իսկ կրօնական ժողովը կը լռէ և անօրինութիւն մը չքներ։ Մինչեւ հանդուրժելի է որ ազգային եկեղեցական իշխանութիւնը մինչեւ այս աստիճան արհամարհուի վարդապետի մը, և այնպիսի վարդապետի մը, որոյ գրեթէ բովանդակ կեանքը նոզկալի արարուածոց չարք մ'է։ Ճաճախ ոմանք կը մեղադրեն ազգային լրագրութիւնը թէ երբեմն խստիւ կը վարուի եկեղեցականաց դէմ։ Այդպիսիք արդեօք ի՞նչպէս կը դատեն այժմ այս վարդապետի խնդրոյն մէջ։ Լրագրութեան պարտքը չէ՞ ազգային եկեղեցական իշխանութեան պատուոյն նախանձախնդիր կանգնիլ։ Լրագրութեան պարտքը չէ՞, մինչեւ այս աստիճան լրացեալ վարդապետ մը հրապարակադոյժ ընել և նորա համար պատիժ պահանջել յօրինակ ղդուշութեան այլոց։

(Թղթակցութիւն Փունջի)

*Սամսոն, 25 Յուլիս 1888։ – Երեկ, արշալուսոյն յեղակարծութեամբ ամենասոսկալի փոթորիկ մը բռնաւ ի Սամսուն։ Հովին սաստկութիւնը մէկ կողմէն և յորդահոս և թանձր վարագոյրի նման իջնող անձրեւը միւս կողմէն իրարանցումը կաւելցնէին. չանէին հըրաբորբոք, դրեթէ բոլոր տեղացիները զարհուրեալ, իրենց անկողիններէն դուրս կը ցատկեցնէր. և ո՛չ մի տան տանիք կարաց տոկալ և դիմադրել ջրոյ ծանր և գահավէժ անցքին, և մանաւանդ չատ մը հին տուներու ձեղուններէ հոսող ջուրերը սենեկաց մէջ մէկմէկ լիճեր ձեւացուցին և մի քանի տուներ ալ բոլորովին յատակ և յատեր դարձուցին։ Կայծակը քաղաքին չատ մը կողմերէն ճախրելով ինկած է հայոց Թաղը ուրոյնդոստ չառաչմամբ Մեծ. Միքայէլ աղայ Թոքաթլեանի տունը, և պատերը ճեղքելով՝ չախչախած է կախուած մեծ հայելիները և այլն և այլ կարասիները. և յետոյ խոհանոցը իջնելով՝ բոլոր պղնձեղէն և այլ անօթները չարդակոտոր բրած է. 40 ոսկւոյ ճրագ առած է. միայն սպասուհւոյն բազուկը ոսկաւ լինչ այրած է, կըսուի. ուրիշ անձի վընաս չկայ. բայց անհոգիք աւելի սարսափահար եղած են և ոմանք հիւանդացած։ Այս փոթորկին առեն հեղեղները քալաքին մեծաերը կառք մը տապալած և մէջը գըտնուող հինգ հոգին մահամերձ վիճակի մատնած են, և չատ ոչխար քշած տարած են։ Բազաքիս կէս ժամու ճանապարհ հեռաւորութեամբ Բաղը քէօյի մէջ կայծակը վառեց ցորենի ահագին չեղջակոյտ մը. հրդեհը տեւեց առաւօտէ մինչեւ երեկոյ։ Դարձեալ քաղաքիս 1 1/2 ժամու չափ հեռի գտնուած Կէրղէմէ գիւղը հայու մը ցորենի մեծ չեղջակոյտը այրեր և կոյր Ստեփան անուն անձին տըղան ծանրապէս վիրաւորեր է, և կըսուի թէ առողջանալուն յոյս չկայ։ – Այս առաւօտ ծովը լուացուող երկու պատանիներ խեղդուած են։ Ամէն տարի ի Սամսուն այսպիսի չաւալի դէպքեր կը պատահին։ – Երէկ առաւօտ քալաքաղղ յոյն երիտասարդ մը չուկաչին մէջ յանկարծամահ եղաւ։ – Մի քանի օրէ ի վեր դարձեալ սկսած է անտանելի չերմութիւն օդոյ, և քալաքիս ապրիւրները և ջրհորները ցամքած են։

Պոլիս, 1 Օգոստոս 1888։ – Տոքթօրիկ Դէօ մը։ – Բիլի անուն իւրանապայի մը ժամանակէ մը ի վեր քիմիական փորձերով կղերայի եւ դեր Փիլատեֆիոյ քաղաքին մէջ, ուր հաստատուած է տղայութենէ մինչեւ այսօր։ Օր մը այս կերպով ղբաղած միջոցին ձեռացը մէջ ունեցած տեսակ մը բաղադրութիւնը դիպուածաւ գետին թափելով, ուր աւազ լեցուած էր, կդիտէ թէ սոյն բաղադրութիւնը զաւազն կհանէ այնչափ ուժգին և կանոնաւոր որ քիմիագէտն մեծ կսր մը ապառաժ քարի վրայ ևս կթափէ այն բաղադրեալ հեղուկէն, և զարմանօք կը տեսնէ թէ ապառաժն անմիջապէս կփշրի և կոչնչանայ, աւազի նման մանր հատիկներ միայն թողլով։ Շարունակելով այդ փորձեր՝ վերջապէս կհնարէ փոքրիկ գործիք մը, ուրուն միջոցաւ սոյն հեղուկ, ուր որ պահանջուի, ի կիր կառնուի և ուրուն մինչեւ ցարդ ցոյց տուած արդիւնքն են հետեւեալք։ Նիւ-եօրք քաղաքի մեծահարուստ բնակիչներէ տասը հանքատէրոջ ական՝ներ հասած ըլլալով պարոն իւլանտացւոյն նորահնար գործին, այցելութիւն մը կուտան իրեն՝ աշխատանոցին մէջ. ուր իրենց առջեւ առնէ ամէն փորձ յաջողապէս կատարուելէ վերջ, Նիւ-եօրքցիք կառաջարկեն պիտանականին՝ իրենց հետ հանքի մը մէջ իջնել և կատարել սոյն փորձերը, խոստանալով որ եթէ հոն տեղւոյն վրայ ևս յաջողի ժայռերն և հողակոյտերն փչրելով ոչնչացընել՝ իւրաքանչիւր հանքատէր հազարական ոսկւոյ պարգև կուտան իրեն։ Պիտանականն կընդունի այս առաջարկութիւնը. կիջնէ հանքերէ միոյն խորը փոքրիկ գործին ի ձեռն, և կսկսի քակել և քանդել ժայռերը և հողերը և ամեն ուրիշ բան այնչափ կատարելապէս և այնչափ արագութեամբ որ ամեն ոք կզարմանայ։ Հարուստք կվճարեն դրամները և կմեկնին և կսկսին որչափ որ անպիտան հանք կայ երկրին մէջ, ծախու առնել. այսինքն՝ այն հանքերն որոց արտադրութիւնն եղած ծախսուց չէր բաւեր. հետեւապէս մէկդի թողուած եին։ Սոյն հանքերը ևս պիտի չահագործուին ի չնորհս Փիմիագէտին որ ցարդ դաղտնիք մ'է։ Անգղիոյ դիտանականաց կաճառը յատուկ պաշտօնեայ մը կխրկէ Փիլատէլֆիա՝ քննելով տեղեկագրելու համար թէ ճշմարի՞տ են լսուած այն տարօրինակ բաները որ Բիլիի նորահնար գործիքին կվերագրեն։ Ցիշեալ պաշտօնեային երկար տեղեկագիր մը տուած է, ըստ հրատարակեցին լրագիրք և որուն եզրակացութիւնը սա է թէ «Փիլատէլֆիացի գիտնականին զանազան փորձերով հաստատած ըլլալն գաղտնիքը ոչ թէ միայն անձանօթ է մեզ, այլ գիտութենանց և ո՛չ մի ճիւղին հետ կապակցութիւն չունի։ Բիլիական գործին բուլորովին տարօրինակ նորութիւն մը ունի որուն մանրամասնութիւնք յայտնի չեն մեզ»։ Բայց Բիլիի ըրած գիւտն միայն նիւթեղինաց ոչնչութիւնով գոհ չըլլար. ժամանակը և միջոցը ևս ոչնչացնել ձեռնարկած է. օրինակի համար. լրագիրք կգրեն թէ նաւակ մը չլինել ձեռնարկած է որոյ միջոցաւ առաւօտ մը նահանջէդ վերջ ճամբայ ելնելով կէս օրի ճաշէն առաջ Կ. Պոլիս պիտի հասնիս, ուր առևտուր ընելէ՝ բարեկամաց այցելելէ և պատուական ջնջոյ ինդիկ ալ ուտելէ վերջ՝ պիտի վերադառնաս Ամերիկա (հեռաւորութիւն վեց հազար անգղիական մղոնի) որպէս թէ պարզապէս չուկան եղած ըլլայիր։ Եւ դէտ ինչե՛ր Աստուա՛ծ իմ։ Պարոն Բիլի գիտնականն հարբստութեան ճանբան բռնած է արդէն. վերջին օրեր հինգ հարիւր ձիու զօրութիւն ունեցող շոգեշարժ մեքենայ մը իւր ցուցամատովն վերցուցած և փոխադրած է այլուր, միայն մեքենային չուրջը բարակ երկաթեայ թել մը կապելէ վերջ։ Այդ թելին վերայ է, կըսեն, բոլոր գաղտնիք, որով հետեւ քանի մը օր առաջ միեւնոյն տեսակ թելի փոքրիկ մի մասը պարզ և սովորական դիտակի մը վերայ հաստատելէ վերջ կհրաւիրէ աստղագէտ պարոններ՝ մոլորակները, լուսինը, և՛ն, դիտել։ Աստղագիտաց պատմութեան նայելով՝ մոլորակներու բնակչաց հետ հաղորդակցութեան խնդիրը իւր գործնական լուծումն ստացած է ընորհիւ Բիլիական գաղտնեաց. միայն ժամանակի կարօտ է բոլորովին կատարելագործելու համար զայն։ Փիլատելֆիացի հարուստ տիկին մը, Պըլըմ անուն, որ իւր բնակութիւնը Լոնտոնի մէջ հաստատած է շատ տարիներէ ի վեր, երկու ստուար հատոր բան գրած է քիմիական գաղտնեաց վերայ. ասկէ ի զատ յայժ գիտնական և իրազեկ պարոն Կինտալ՝ մանրամասն քննութիւններ ընելէ վերջ յափշտակուած է Բիլի գիտնականին ըրած յայտնի գիւտի վերայ։ Կը պատմուի թէ Փիլատէլֆիացի դիտնականին ըրած նոր գիւտը հրաշալիք մը չէ այլ պարզապէս մինչեւ յարդ դիտնականաց անծանօթի բնութեան պարզ օրէնքներէն մին է. դի յայտնի է թէ արուեստական կամ գիտական ամէն լինչ բնական օրինաց ընդօրինակութիւնն է և ոչ այլ լինչ. հետևապէս զարմանալի չէ եթէ պարոն Բիլի յաջողած է բնութեան օրինաց մին ևս տեղբելի ներքև առնելով մարդկային յառաջդիմութեան օգտակար ընելու գործած է, ձգողական և քարշողական անդիմադրելի զօրութենց սանձ մը հնարելով. դի հարկ է գիտնալ թէ ըստ վկայութեան բաղմաց, պարոն գիտնականի նոր գիւտը ո՛չ այլ լինչ է, բայց եթէ ձգողական և քարշողական զօրութեանց մի նոր գաղտնիքը, որ յարդ անծանօթի էր ի մեզ, որուն միջոցաւ այժմ կարելի է տեղբեալ այդ ահարկու զօրութիւնները կամ ոչնչացնել զանոնք եթէ հարկ ըլլայ։ Հոս է ահա բոլոր գաղտնիքը։ Կը պատմեն լրագիրք թէ Փիլատէլֆիացի գիտնականն կպարծենայ եղեր, ըստ. լով. «եթէ գիտնաք թէ ի՛նչ պարզ միջոցներով կընեմ բոլոր այն բաները որք ձեզ կզարմացնեն, և թէ վերահասու լինիք այն գաղտնեաց որոց դիպուածաւ միայն տեղեկացայ ես, վստահ եղիք թէ պիտի զարմանաք թէ ո՛րչափ յիմարական են եղեր գիտութենանց մէջ ձեր հետևած ուղղութիւնք, որովհետև այն ուղին որ ղմեզ պիտի մերձեցուցանէ կատարելութենան, չէ այն որուն կհետևիք դուք. բոլորովին հակառակ ուղղութիւն մը պէտք է մեզ բանական էակաց և այս իսկ է իմ պիտոյս։» Տեսնենք . . . : Աբգ»

ՍԶԳՍՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատրիարքարանէն տակաւին այս շաբթու ղրկուեցաւ դատական ու կրօնական գործոց նախարարին ծանուցեալ գրոյն պատասխանն։ Ըստ մեր տեղեկութեանց՝ պատասխան տրուած է թէ երեսփոխանական ընտրութիւնք սահմանադրութեան տրամադրութեանց համաձայն կը կատարուին, և եթէ անհամաձայն ընտրութիւնք տեսնուին՝ չեն վաւերացուիր. և թէ՝ ազգային ընդհանուր ժողովոյ ներքին կանոնագրութիւնն ընդունուած է՝ հետզհետէ ըստ սկզբանց սահմանադրութեան սրբագրելու և բարեփոխելու պայմանաւ։ Կարծեմք թէ այս պատասխանը գոհացուցիչ նկատուելով պիտի փակուի միջադէպն, և երեսփոխանք մէկ կամ երկու շաբաթէն պիտի հրաւիրուին ի ժողով՝ պատրիարքութեան գործը կատարելու համար։

— Վեհափառ Տ. Տ. Մակար Հայրապետեան ամենայն Հայոց՝ առ Ամեն. Տ. Յարութիւն Ս. Հայրն շնորհաւորութեան կոնդակ ուղղած է, ի պատրիարքութիւն Երուսաղէմայ ընտրութեան հաստատութեանն առթիւ։

— Նորին Վեհափառ Սրբազնութիւնը շնորհաւորական կոնդակաւ մեծարած է նաև պատրիարքական տեղապահ Սեբաստեան Գեր. Տ. Սիմէն Սրբազանն, և Արքեպիսկոպոսութեան տեղոյս շնորհած է։

— Գաղատիոյ Ս. Աստուածածնի վանքէն գուրս հանուած եկեղեցական դգեստք, առկաւին կը մնան Պատրիարքարանի մէջ։ Խառն ժողովը տեսնելով որ Գալատիոյ Առաջնորդարանէն տրուած պատասխանը գոհացուցիչ չէ, որոշեց դրել որ այդ դգեստուց վաճառման պատճառ եղողներն ևս դարձեալ առնուած դրամն, և դգեստք դարձեալ վանքին սեպհական լինին։ Շատ դովելի է ազգային Վարչութեան այս նախանձախնդրութիւնն, և փափաքելի որ միշտ այս ոգւով վարուի Պատրիարքարանը նմանօրինակ խնդրոց մէջ։

— Բաղէշի առաջնորդական նորընտիր տեղապահ Կիւրոյեան Տ. Խորէն վարդապետի պաշտօնը վաւերացնող հրամանագիրը Բ. Դրնէն Պատրիարքարանի տրուեցաւ այս շաբթու, և անոր ղրկուեցաւ առ Կիւրոյեան։ Մաղթենք որ գտնէ այս պաշտօնին մէջ ինչ բաւական ժամանակ մը և աշխատի ժողովրդեան օգտին համար։

— Գարթալի թաղական խոր-

ՄԱՀՎԱՆՑ ՎԱՅՐԿՅԱՆ (*)

Ծանր հիվանդության երկար շաբաթներ ապրեցինք մենք՝ Մահվանց Վայրկյանի ընտանիքի անդամները, նրա մտերիմ ընկերները, ծանոթները, հարազատները, ամբողջ գյուղը, ամբողջ շրջանը, ամբողջ հանրապետությունը։ Ամեն օր, ամեն ժամ, ամեն րոպե մենք սպասում էինք, որ հիվանդանոցից կգա հեռախոսազանգը, որ կհայտնեն, թե Մահվանց Վայրկյանը մահացել է։ Ամեն անգամ, երբ հեռախոսը զնգում էր, մենք սարսափում էինք, որ հիմա կլսենք այդ ահավոր լուրը։ Ամեն անգամ, երբ հեռախոսը զնգում էր, մենք ուզում էինք, որ հիմա կլսենք, թե Մահվանց Վայրկյանը ուշքի է եկել, թե նրա վիճակը լավացել է։ Ամեն անգամ, երբ հեռախոսը զնգում էր, մենք ուզում էինք, որ հիմա կլսենք, թե Մահվանց Վայրկյանը ապրելու է։

Մենք ուզում էինք, որ Մահվանց Վայրկյանը ապրի, որովհետև նա մեր ընկերն էր, մեր հարազատը, մեր գյուղի, մեր շրջանի, մեր հանրապետության հպարտությունը։ Մենք ուզում էինք, որ նա ապրի, որովհետև նա մեր ընկերն էր, մեր հարազատը, մեր գյուղի, մեր շրջանի, մեր հանրապետության հպարտությունը։ Մենք ուզում էինք, որ նա ապրի, որովհետև նա մեր ընկերն էր, մեր հարազատը, մեր գյուղի, մեր շրջանի, մեր հանրապետության հպարտությունը։

Մենք ուզում էինք, որ Մահվանց Վայրկյանը ապրի, որովհետև նա մեր ընկերն էր, մեր հարազատը, մեր գյուղի, մեր շրջանի, մեր հանրապետության հպարտությունը։ Մենք ուզում էինք, որ նա ապրի, որովհետև նա մեր ընկերն էր, մեր հարազատը, մեր գյուղի, մեր շրջանի, մեր հանրապետության հպարտությունը։ Մենք ուզում էինք, որ նա ապրի, որովհետև նա մեր ընկերն էր, մեր հարազատը, մեր գյուղի, մեր շրջանի, մեր հանրապետության հպարտությունը։

Մենք ուզում էինք, որ Մահվանց Վայրկյանը ապրի, որովհետև նա մեր ընկերն էր, մեր հարազատը, մեր գյուղի, մեր շրջանի, մեր հանրապետության հպարտությունը։ Մենք ուզում էինք, որ նա ապրի, որովհետև նա մեր ընկերն էր, մեր հարազատը, մեր գյուղի, մեր շրջանի, մեր հանրապետության հպարտությունը։ Մենք ուզում էինք, որ նա ապրի, որովհետև նա մեր ընկերն էր, մեր հարազատը, մեր գյուղի, մեր շրջանի, մեր հանրապետության հպարտությունը։

Մենք ուզում էինք, որ Մահվանց Վայրկյանը ապրի, որովհետև նա մեր ընկերն էր, մեր հարազատը, մեր գյուղի, մեր շրջանի, մեր հանրապետության հպարտությունը։ Մենք ուզում էինք, որ նա ապրի, որովհետև նա մեր ընկերն էր, մեր հարազատը, մեր գյուղի, մեր շրջանի, մեր հանրապետության հպարտությունը։ Մենք ուզում էինք, որ նա ապրի, որովհետև նա մեր ընկերն էր, մեր հարազատը, մեր գյուղի, մեր շրջանի, մեր հանրապետության հպարտությունը։

(*) Տե՛ս թիւ 2110

ՄԱՀՎԱՆՑ ՎԱՅՐԿՅԱՆ (*)

Ծանր հիվանդության երկար շաբաթներ ապրեցինք մենք՝ Մահվանց Վայրկյանի ընտանիքի անդամները, նրա մտերիմ ընկերները, ծանոթները, հարազատները, ամբողջ գյուղը, ամբողջ շրջանը, ամբողջ հանրապետությունը։ Ամեն օր, ամեն ժամ, ամեն րոպե մենք սպասում էինք, որ հիմա կլսենք այդ ահավոր լուրը։ Ամեն անգամ, երբ հեռախոսը զնգում էր, մենք սարսափում էինք, որ հիմա կլսենք այդ ահավոր լուրը։ Ամեն անգամ, երբ հեռախոսը զնգում էր, մենք ուզում էինք, որ հիմա կլսենք, թե Մահվանց Վայրկյանը ուշքի է եկել, թե նրա վիճակը լավացել է։ Ամեն անգամ, երբ հեռախոսը զնգում էր, մենք ուզում էինք, որ հիմա կլսենք, թե Մահվանց Վայրկյանը ապրելու է։

Մենք ուզում էինք, որ Մահվանց Վայրկյանը ապրի, որովհետև նա մեր ընկերն էր, մեր հարազատը, մեր գյուղի, մեր շրջանի, մեր հանրապետության հպարտությունը։ Մենք ուզում էինք, որ նա ապրի, որովհետև նա մեր ընկերն էր, մեր հարազատը, մեր գյուղի, մեր շրջանի, մեր հանրապետության հպարտությունը։ Մենք ուզում էինք, որ նա ապրի, որովհետև նա մեր ընկերն էր, մեր հարազատը, մեր գյուղի, մեր շրջանի, մեր հանրապետության հպարտությունը։

Մենք ուզում էինք, որ Մահվանց Վայրկյանը ապրի, որովհետև նա մեր ընկերն էր, մեր հարազատը, մեր գյուղի, մեր շրջանի, մեր հանրապետության հպարտությունը։ Մենք ուզում էինք, որ նա ապրի, որովհետև նա մեր ընկերն էր, մեր հարազատը, մեր գյուղի, մեր շրջանի, մեր հանրապետության հպարտությունը։ Մենք ուզում էինք, որ նա ապրի, որովհետև նա մեր ընկերն էր, մեր հարազատը, մեր գյուղի, մեր շրջանի, մեր հանրապետության հպարտությունը։

Մենք ուզում էինք, որ Մահվանց Վայրկյանը ապրի, որովհետև նա մեր ընկերն էր, մեր հարազատը, մեր գյուղի, մեր շրջանի, մեր հանրապետության հպարտությունը։ Մենք ուզում էինք, որ նա ապրի, որովհետև նա մեր ընկերն էր, մեր հարազատը, մեր գյուղի, մեր շրջանի, մեր հանրապետության հպարտությունը։ Մենք ուզում էինք, որ նա ապրի, որովհետև նա մեր ընկերն էր, մեր հարազատը, մեր գյուղի, մեր շրջանի, մեր հանրապետության հպարտությունը։

տիի Նիշաստաճեան։ – Ֆերիգուեթեան աստիճան՝ Թաշլըճայի (Դոսուա) կառավարիչ և զինուորական հրամանատար Սիւլէյման փաշային։

Միջերկրականի անգղիական նաւատորմի ընդհանուր հրամանատար Էսիմպուրկի դուքսն, երկրորդ որդի Թագուհւոյն Անգղիոյ, առաջիկայ չորեքշաբթի մայրաքաղաքս կուգայ, և քանի մը օր կը մնայ։

— Ինչպէս արդէն ծանուցեալ էր, առաջիկայ երկուշաբթի Մեծ Կղզւոյն առջեւ տեղի պիտի ունենայ նաւարշաւի հանդէսն, ընդհովանաւորութեամբ Օգոստ. Սուլթանի։

— Եգիպտոսի օսմանեան պատուիրակ Ահմէտ Մուխթար փաշա Մասուայի յիսուածեայ դրաւման լեռնդրոյն վրայ երեք տեղեկագիր ղրկելով ի Բ. Դուռն, օսմանեան կայսրութեան համար կարեւոր ու կենսական կը համարի լեռնդրին, և թուելով այն հետեւանքն, զոր օսմանեան կայսրութեան միւս ըստացուածոց համար կրնայ յառաջ բերել իտալական գրաւումն, հարկ կը համարի յոյժ ազդու ընթացք բռնել Մասուայի դրաւման լեռնդրոյն մէջ։ Ծայտնի է թէ արդէն Բ. Դուռն բողոքագիր ուղղած է առ մեծ տէրութիւնս, և Գաղղիոյ հանրապետութիւնն ալ դիտողութիւնները կընէ Իտալիոյ կառավարութեան ընթացից դէմ։

— Ա.յսընի կուսակալ Րիզա փաշա, որ քանի մ'օրէ հետէ մայրաքաղաքս կը գտնուէր, այսօր կուղեւորի ի պաշտօնավայրն։

— Պավիէրայի թագաւորին սենեկապետ Պ. Սթասֆ, ի դիմաց դրամատերաց խմբի մը մայրաքաղաքս եկած և Բ. Դրնէն լեռնդրած է Նիկոմիդիա-Էնկիւրիի երկաթուղւոյ շինութեան մենաշնորհը։

— Պելճիական ընկերութիւն մ'ալ Սամսունէն ի Սեբաստիա երկաթուղւոյ շինութեան արտօնութիւն կը խնդրէ Բ. Դրնէն։

— Տասնամեայ չրմայական աշխատութեան դատապարտեցաւ՝ քանի մը ամիս յառաջ Երուսաղիմայ Ցունաց Պատրիարքին վերայ բռնվուլէը պարպող յոյն քահանայն։

— Կայսերական Միլքիյէ վարժարանի քննութիւնք կը սկսին առաջիկայ հինգշաբթի։ Իրաւագիտական վարժարանի դասախօսութիւնք կը սկսին այսօր։

— Սարըհարի ծանուցեալ ոճրագործութեան մասնակցող Ալի, Սաֆերը և Մուսթաֆա անուն լազք ի պաթում ձերբակալուեր և մայրաքաղաքս բերելու համար ճանքայ հանուեր են։

— Օսմանեան լիրան նենգող մարդ մը ձերբակալուեր, և գըրպանէն 25 նենգեալ լիրա գտնուեր է։

— Անցեալ չաբթու Գասը գիւղի ծովեզրէն գտնուեցաւ՝ Բերայի Թաթավլա թաղը բնակող Ֆրանսուա անուն սպանիացւոյ մը դիակը։ Սորա տունէն նամակ մը գտնուեր է, յորում դանգատած է դրամական անձուկ վիճակէն։

— Պիթլիսի գաւառական լրագրոյն մէջ կը կարդանք թէ Յուլիսի 22րդ օրն Ախլաթ գիւղաքաղքի և չրխակայ եօթն գիւղորէից մէջ երկու ժամու չափ կարկուտ և յորդահոս անձրեւ տեղալով մեծ վնաս պատճառեր է։ Հեղեղն քանի մը տարեր է գիւղերու հունձքերն, արմտիքներն և բազմաթիւ անասուն, և տուներ, խանութներ և ջաղացքներ վէրը և երեք մարդ խեղդուեր են։

— Զինաստանէն և Վլատիվոստոքէն քանի մ'օր յառաջ մայրաքաղաքս եկող ռուսական Ս. Պետրբուրկ չոգենաւն՝ Երէտրի կայսերական պալատան համար սակաւագիւտ թռչնոց ու անասնոց հաւաքածոյ մը բերաւ յիշեալ հեռաւոր երկիրներէն։

— Ա.լճերիացի 250 ընտանիք առադաստանաւերով Ադրիա հասեր են, օսմանեան հպատակութիւնն ընդունելով անդ բնակութիւն հաստատելու համար։

— Նախորդ թերթով հրատարակեալ հերքման հակառակ, կայսերական հրամանաւ վաւերացեալ է պաշտօնէից ամսաթոշակին յատկացեալ գումարին 100 ին 5 ը զեղչելու որոշումն, և պիտի գործադրուի ամսոյս սկիզբէն։ Ա.յս զեղչէն ազատ պիտի մնան 100 ղրուշ ամսաթոշակ ունեցող պաշտօնեայք և 500 ղրչ առնող Միւտիրք։

— Կայսերական հրամանաւ 30 տարի ևս կերկարաձգի Շերքէթիխայրիյէի պայմանաժամն, և ընկերութիւնը կը պարտաւորի զեղչել երկաթուղիներն և հասարակաց օգտակար ուրիշ անօրինութիւններ ընել։

— Ա.յս տարի այլ և այլ երկիրներէ Մէքքէ գնացող մահմետական ուխտաւորաց թիւն է 100 հազար։

— Խորէմիաէն (Զմիւռնիա) կը գրեն թէ 17 ամեայ պատանի մը, Պալիաս Մատէն բնակող երկրագործի մը որդին, յափշտակուած էր երեք աւազակաց ձեռամբ և 200 ոսկի կը պահանջէին իբր փրկանք։ Ա.յս նպատակաւ բանակցութիւնք սկսուած և պատանւոյն հայրն հաւանած լինելով պահանջուած փրկանքը վճարել, աւազակաց երկուքը Պալիաս Մատէն գնացեր են։ Երրորդն որ պահն էր, յանձն առեր է տղան պահել։ Մէկոյ մը ծարաւէն պատկելով, աւազակն հրացանը գետին կը դնէ և դէպ ի մօտակայ աղբիւր մը կը յառաջանայ։ Դառաւ դերին, սքանչելի պաղատանութեամբ մը զինքն յափշտակելով, նշան կառնու և կը պարպէ։ Աւազակն ուսէն վիրաւորուելով գետին կը փռուի և կը մեռնի սոսկալի տանջանաց մէջ։ Տղան կսկիծ փախչիլ իւր բոլոր ուժովն և ուղղակի գիւղն հորը քով կը հասնի։ Դիւրին է երեւակայել այս վերջնոյն ուրախութիւնը, թէ՛ որդին փրկուած տեսնելով և թէ՛ 200 ոսկին վճարելու հարկէն ազատ լինելով։

— Պէրութի համանուն թերթը Պալպէքէն գրուած տեղեկութիւններէ քաղելով կը պատմէ թէ տեղւոյն ոսոխականութեան տանապետը թշնամութիւն ունենալով Մուսա Ֆանուն անուն երիտասարդի մը հետ, փորձեր է սպաննել զնա։ Անցեալ շաբթու ոսոխականը մինչև քաղաքին աչտարակին մօտ հալածեր է երիտասարդը, բայց նա ներսը ապատանելով, վեր մագլցեր, և այս կերպով առժամապէս ազատ մնացեր է թշնամւոյն յարձակումներէն։ Ոսոխականը կատղած, իւր մարդոց մին հաւասար բարձրութեամբ չէնքի մը վրայ երթալով քար մը նետեր է երիտասարդին ճակտին. խեղճը վար գլորելով թշնամւոյն ձեռքն ինկեր է, և նոքա չարչարեր են զնա և բարձր տեղէ մը վար նետեր են։ Մուսա չէ մեռեր, բայց վիճակը ծանր է։ Ա.յս լուրդ տարածուելուն պէս կուսակալն անմիջապէս ձերբակալել տուեր է յանցաւոր տասնապետն ու մեղսակիցները։

— Էսիրնէի գաւառական լրագիրը կը պատմէ թէ՝ չորս պուլկար աւազակ, որք երկու տղայ յափշտակած էին Սիլօբուլօ գիւղէն (Արեւելեան Րումէլի), եկեր են ապաստանիլ Ա.քիէէքօլի, յայսկոյս սահմանագլխոյն։ Օսմանեան իշխանութիւնք զայս իմանալով՝ ոստիկաններ ճանքայ հաներ և յաղողեր են ազատել գերի մանկանց մին։ Իսկ միւսն Արեւելեան Րումէլի տարուեր է աւազակաց ձեռամբ։ Ա.քիէէքօլիի կառավարչին կողմանէ հաղորդուած վերջին լրոյն նայելով, աւազակք այդ գաւառակը վերադարձեր են և չընորհիւ ոստիկանութեան հալածանաց, երկորդ տղայն ևս որ անոնց ձեռքը կը գտնուէր, ազատուեր է առանց փրկանք վճարելու, և իւր մօր ու եղբարց յանձնուելր է, որք Ա.քիէէքօլի եկած էին։ Աւազակք վերստին Արեւելեան Րումէլիի կողմը փախեր են։

— Մանկամարդ յոյն աղախին մը անցեալ չաբաթ օր անձնասպանութեան փորձ ըրաւ ի Թարապիա, անգղիական դեսպանատան առջեւէն ծով նետուելով։ Դեսպանատան գաւառներէ մին տեսնելով ինքն ալ ծով նետուեցաւ աղախինն ազատելու համար, բայց լողալ չէր գիտեր, և միայն քաղութեանը վրայ դրած էր յոյսն։ Անյուս հանդերձ յաջողեցաւ աղջկան թևէն բռնել. սակայն հոսանքը շատ սաստիկ լինելով՝ Գավան ալեայց դէմ կը մաքառէր և թերևս երկուքն ալ ընկղմէին բոլորովին, եթէ դեսպանատան խոհարարը Գավասին աղաղակները լսելով, յօժարութիւն չփութար։ Ա.յս վերջինը լողալ գիտեր, ուստի բուռն ճիդերէ յետոյ յաղողեցաւ ազատել աղախինն ալ, Գավասն ալ։ Ըսյն աղջկան անձնասպանութեան փորձը սիրային վշտի մը կը վերագրուի։ Նշանածը վկնքը լքած լինելով, խորհեր է թէ լաւագոյն է վերջ տալ իւր կենաց։

ԴՐԱՄԱԿԱՆ

Կ. Պոլիս 13 Օգոստոս 1888

Օսմանեան ֆոնտօլիտ	16- 8
Րումէլիի երկաթուղի	Ֆրանգ 41-50
Թրամուէյ	Լ. 0. 462

Օսմանեան լիրան 100 ղրուշէն

Մէճիտիէ	108-13
Մէճիտիէ	104-20
Հինգնոց	104-
Վեցնոց	104-
Բուսպի թղթադրամ	9-20
Բուսպի արծաթ	74-20
Ռուսիոյ Բոլ	91-
Գաղղիական լիրա	88-
Անգղիական »	110-30
Գրիվից	51-20

ՍՐՏԱԲԻՆ ԼՈՒՐԵՐ

= Գերմանիոյ հանրածանօթ Մարաշլախա Մոլթքէ, որ 30 տարիէ հետ սպայակուսին դէմքը գանուելով և բանակաց վերակազմութիւնն ի գլուխ տանելով՝ յաղթութենէ ի յաղթութիւն առաջնորդած է զօրաց, թէ և իւր 88 տարեկան) պատճառաւ հրաժարեցաւ, սակայն կայսրը չուզելով զրկուիլ նորա ռազմագիտական փորձ ու խմաստուն խորհուրդներէն՝ կայսրութեան պաշտպանութեան խորհրդոյ նախագահ կարգեց զնա։ Մոլթքէի մոյորդած է իւր օգնականն՝ զօրավար Վալտերզէ, 56 տարեկան. սորա կինն ամերիկացի է. կըսուի թէ կարեւոր դիրք ունի կայսերական գերդաստանին մօտ, և մեծ ազդեցութիւն՝ Գերմանիոյ կայսեր և կայսրուհւոյն վերայ։ Ա.յս զօրավարը պատերազմասէր կուսակցութեան պետ կը համարուի, և բաւական համբաւեալ է իւր պահպանողական և հակահրէական գաղափարց պատճառաւ։

= Ռուսիոյ կայսեր հետ Գերմանիոյ կայսեր վերջին տեսակցութեան վերայ՝ Ռուսիոյ և Գերմանիոյ յարաբերութեանց ակընկալեալ կամ դուշակեալ բարւոքումն չերեւիր։ Ա.յս երկու երկրաց նշանաւոր լրագիրք, մինչեւ իսկ պաշտօնական լրագրութեանց ոմանք այս օրերս սկսած են կըծու լեզուաւ խօսիլ միմեանց դէմ։ Աւստրիոյ և Ռուսիոյ լրագիրք արդէն հաշտ չեն և ծանր յօդուածները կը հրատարակեն իրարու դէմ։

= Միւլհուզցի 21 տարեկան գաղղիացի երիտասարդ մը, ջերմ հայրենասէր, ինքզինքն սպաններ է, որպէս զի չհարկադրի ծառայել գերմանական բանակին մէջ։

= Գերմանիոյ կայսրը, Ֆրեդերիկ Բարլ իշխանին ի պատիւ կառուցեալ արձանին բացման հանդիսին մէջ ըսեր է. «Ինդիր չը կրնար լինիլ որ ձեռքէ հանենք մեր ստացած բաներն. յայսմ մասին նոյն զգացումն ունինք ամենքս ալ. լաւագոյն է կորուսանել մեր 18 բանակն և 42 միլիոն բնակիչն, քան մեր ձեռքէն հանել մեր գրաւած երկրէն քար մը։»

= Գերմանիոյ կայսրը կատարել տուեր է զօրահանդէս Պէռլին հաստատուած Պէտեվինեռուն։ Սոքա խումբ մը զօրաց և ոստիկանաց հետ դնացին զինուորական մարզանաց դաշտը, թօզլով այն փակ տեղն ուր հասարակութիւնը կերթար ամեն օր տեսնել զերենք։ Պէտեվիք գիշեր մը անցուցին յիշեալ դաշտին վրայ, իրենց ձիերով, ուղտերով և շուներով. երբ իրենց կերակուրը կը պատրաստէին, կայսրն երեւցաւ, և փայլուն սպայակոյտի մը հետ ձին վազցնելով յառաջացաւ Պէտեվիներուն վրայ։ Սոքա չարուեցան իրենց վրաններուն առջեւ։ Երբ կայսրը կասեցոյց ձին, Պէտեվիք ամենայն յարգանօք երեսի վրայ ինկան և իրենց ճակատն հողին դպցուցին։ Ոտք ելան երբ կայսրը նշան մ'ըրաւ անոնց պետին, որ ծերունի Շէյխ մ'է։ Սա յայնժամ դեպ ի կայսրն յառաջացաւ, թեւերը կուրծքին վրայ խաչաձեւած և գլուխը խոնարհած, իբր նոր յարգանք մը կամ ողջոյն մը։ Կայսրը ժպտելով նմա կարկառեց իւր ձեռքը, և Շէյխին համբուրեց։ Կայսրն յայնժամ աչքէ անցուց Պէտեվիները զինուորական կարգաւ մը, և քննեց ամենց վիճակառուն բնակութեան և զէնուկն։ Հարցուփորձեր ըրաւ ամենց ձիերուն վրայ, և քննեց արաբական երկար հրացանները, զուարճաբանութեամբ համեմելով իւր հարցուփորձերը. չատ հաւնեցաւ արաբ նժոյգներուն, և պատուիրեց որ անոնցմէ իրեն համար գնուի։ Յետոյ Պէտեվիք զանազան վարժներ ըրին, կայծակի արագութեամբ ձի նետան, իբր թէ թշնամւոյ վրայ յարձակելու համար, մինչ ուղտապանք նոյնչափ արագութեամբ ուղտերը կը բեռնաւորէին. ներկայացուցին կարաւանի մը յառաջխաղացութիւնը։ Իրենց Շէյխին հրամատարութեան ներքեւ ուրիշ վարժներ ալ ըրին, յորոց չատ ախորժեցաւ կայսրն և գոհունակութիւն յայտնեց Շէյխին։

= Օգոստոսի 14 ի գիշերն առաւօտեան դէմ դանիական կեչուէ չոգենաւն, որ Նիւ-Եօրքէ Դանիա կերթար, ընդհարեցաւ դանիական թռչնվաճառ չոգենաւուն, որ Դանիայէն Նիւ-Եօրք կ'երթար։ Օդը միգապատ էր, և առտիկ անձրեւ մը կը տեղար։ Եւ ահա յանկարծ թռչնվաճառ չոգենաւը, պարեղբեւելով կէս յսեր չոգենաւուն, առջակողմը մխեց անոր կողին մէջ։ Թռչնվաճառի առաջակողմն երբ բաժնուեցաւ կէս յսերի կողէն, արիւնաթաթաւ էր, և մարդու դիակներ և մարդկային մսի կտորներ կառչած էին անոր ծայրն։ Այնչափ բուռն էր բախումն, որ կէս յսերի մէջ ննջող ճանբորդք իրենց մահճակալաց մէջ կտոր կտոր եղած էին, կամ ջուրց անդիմադրելի հոսանքէն յաղթահարեալ, չոգենաւուն վերն եղնելու ժամանակ իսկ չէին գտած։ Թռչնվաճառ թէեւ ջնասուեցաւ, բայց կրցաւ ճանբան շարունակել։ Իսկ կէս յսեր եօթն վայրկեան մէջ ընկղմեցաւ. նորա 80 ճանբորդաց 14ը միայն և 30 նաւագիայ 17ը միայն ազատեցան, որով 100է աւելի անձինք կորան։ Անհկարագրելի է բախման յաջորդած ողորմելի տեսարանն, երբ խումբ խումբ ընտանիքներ, իրենց հանգիստ քունէն ընդոստ զարթնելով, զիրենք ծովկեանոս կոհակաց ճարակ տեսան, և յուսահատ ճիչերով և ուշնայն չանքերով ի զուր մաքառեցան վերահաս մահուան տագնապներուն դէմ։ Երկու չոգենաւուց մակոյկներն և ազատաշար գործիքները քիչ օգուտ ունեցան։

= Ռուս լրագիրք կը ծանուցանեն թէ Պետրապուրկ հասած է Հայր Փայիսի, որ քանի տարի վարած եր Ա.յնորզի վանքին կ. Պոլսոյ ճիւղը։ Ռուսիա կանչուած է վարդապետ ձեռնադրուելու համար և յետ այնորիկ վանահայր պիտի անուանի Հապէշաստանի մէջ ռուսական առաջին վանքին, որ պիտի շինուի այն հողի վերայ զոր Հապէշոյ Յովհան Թագաւորը Ռուսաց Թողած է Հապէշաստանի հարաւային մասին մէջ, ուր խաղաներն արդէն հիմնած են ամրացեալ գիւղ մը։ Ա.յնորզի վանքին եկեղեցական–գինուորական–քաղաքական առաւելութիւնք այն աստիճան գնահատուած են Ռուսիոյ մէջ, որ կ'ուզուի անոր նմանները չատցնել, և մանաւանդ կարմիր Ծովու եզերաց վերայ նմանօրինակ հաստատութիւն մ'ունենալ։

= Գահիրէէ կը հեռագրեն թէ կուսակիցք Մէհմէի այրեցուածները րլին կոնտար քաղաքը։

= Ֆերտինանտ իշխանն, իր ընտրութեան տարեդարձի հանդիսին առթիւ, Ս. Ալեքսանտրի պատուանշանի մեծ ժապաւէնը նուիրեր է Սթամպուլով և ժիվքով նախարարաց, և այլ և այլ նուէրներ՝ միւս նախարարաց, և սպայից ոմանց աստիճաններըը բարձրացուցեր է։

= Դարձեալ խօսք կայ թէ Պուլղարիոյ նախորդ իշխան Ալեքսանդր ի Լոնտոն հրաւիրուեր է Անդղիոյ թագուհւոյն կողմանէ, և անդ պիտի նշանուի Գերմանիոյ կայսեր քրոջ հետ։ Բայանի է թէ Ֆրէտէրիկ կայսեր օրով այս խընդիրն յուզեցաւ բայց խափանեցաւ Պիզմարդ իշխանի ընդդիմութեամբ, և առարկութեամբ թէ այսպիսի ամուսնութիւն մը եթէ երբէք տեղի ունենայ, Ռուսիոյ կայսրը մեծապէս կը դժգոհի, որովհետև Ալեքսանդր իշխանի հակակիր է։ Աւրդ կըսուի թէ Կիւոմ կայսին ու Պիզմարք իշխան դարձեալ պիտի չանան չթոյլատրել։

= Եգիպտոսի Խեդիվին երկու որդիքն՝ որ ի Գերտսպուրկ գնացած են, հիւրընկալեցան կայսերական պալատան մէջ։

= Անգղիոյ չոգեկառքերը մրցմամբ տարապայման կը կարճցընեն հեռաւորութիւնները։ Կառախումբ մը Լոնտոնէ յԷտին. պուրկ գնացեր է 7 ժամէն և 32 վայրկենէն։ Մրցին հաշուով՝ մէկ մղոնի համար 1 վայրկեան ժամանակ։ Այսչափ արագութիւն՝ և ո՛չ մէկ երկրի չոգեկառաց համար լսուած չէ ցարդ։

= Արեւմտեան Եւրոպիոյ մէջ ցորենի հունձքերն ողորմելի վիճակ մ՚ունեցած են։ Այս պատճառաւ է որ ցորենի գիներն բաւական բարձրացած են ի Լոնտոն, Փարիզ, Նիւ-Եորք և Հիւսիսային Ամերիկա տրամադիր են հայթայթել Եւրոպիոյ համար հարկաւոր եղած ցորենը, մրցելով Հարաւային Ամերիկայի, Հնդկաստանի, և Պալքաններու, Ռումանիոյ ու հարաւային Ռուսիոյ հետ. սակայն Նիւ-Եորք մտադիր է քիչ մը սուղ վաճառել այն ցորենը զոր պիտի ղրկէ Եւրոպա։

= Ի Սոֆիա և Պուլղարիոյ ուրիշ քաղաքաց մէջ ամսոյս 2 ին տօնեցաւ Ֆերտինանտ իշխանի ընտրութեան տարեդարձն։ Իշխանը, թէպէտ հռոմէական, Մայր եկեղեցւոյ մէջ դանուեցաւ դոհանական պաշտամանց ժամանակ. եկեղեցիէն դուրս երթալու ատենը թնդանօթներն որոտացին, և 5000 զօրաց մասնակցութեամբ հանդէս մը կատարեցաւ։

= Վիէննայէն Օգոստոս 4 թուով հեռագրեալ է թէ բազում Պուլղար գաղթականք և այլք կը պատրաստուին արշաւել մեծերս ի Պուլղարիա Դանուբի և Ռուտուի ետեւն կոդմանէ. և թէ երկիւղ կայ որ ծանր անկարգութիւնք տեղի պիտի ունենան ի Պուլղարիա։

= Կըսուտգուի իտալացւոց վերագրեալ նոր պարտութեան (ի Մասուա) լուրն Ֆերպէյ անուն ցեղասէր մը որ երթեկին Իտալացւոց դաշնակցեալ էր՝ զննդեմ դառնալով՝ Իտալացւոց հետ պատերազմը և յաղթող է յաղթող հանդիսանալ։ Այս լուրը չատ դէշ տպաւորութիւն ըրած է Իտալացւոց վերայ, և Գաղղիացիք՝ որ վերջին ժամանակներս ընդ ակամբ կը նային Իտալիոյ վերայ՝ ուրախ կերևին։

= Ամսոյս 7 ին, երկրաշարժի ցնցմունք զգացուեր են ի Տիանմարինա և Բոր-Մորիս մերձ ի ձէնովա։

= Պետրսպուրկէ Օգոստ. 7 թուով հեռագիր մը կը յանուցանէ թէ Օտեսացի Ռուս բժիշկ մը ասիական քոլէրայի դէմ պատուաստի գիւտ մը ըրեր է։

= Իտալիոյ նախարարապետը Գերմանիա դնաց՝ Պիզմարդ իշխանի հետ տեսակցելու համար։

= Եգիպտական նախկին հրամանատար անգղիացի Հըլիթըն փաշա՝ որ Մէհմէի ձեռքը գերի ինկած էր, նախորդ ամսոյ սկիզբները կուրծքի հիւանդութեամբ մեռեր և իբրև մահմետական թազուեր է։ Մահմետականութիւնն ընդուներ է սա՝ կեանքը վրկելու համար։ Վախճանեալը թողեր է հապէշ կին մը և դուստր մը։ Մէհմէտին չատ ցաւեր է սորա մահուան վերայ, որովհետև Նեղոսի վերայ նաւեր և վիներանին մէջ դէնքեր չինելով՝ մէհմէական բանակին օգտակար կը լինի եղեր։

= Ի Լոնտոն, երեք լուսանկարիչք՝ որ Գաղղիացին անհամեստ լուսանկարներ վերադրած էին վաճառելու համար, ի դատ կոչուելով դատապարտեցան երկամեայ բանտարկութեան, 100 ական ոսկի տուգանայ, և 400 ական ոսկի հատուցանելու յերաշխաւորութիւն ըսելով՝ թէ ըսծնամեայ բարուք ընծայ։

= Անցեալ չաբթու ի Մանչեսթըր կախուեցան ձաքսըն անուն անձ մը՝ որ իւր բանտապահն ըսպանած էր փախչելու համար, և Տըլանի անուն մարդ մը՝ որ երկամեայ ձողով սպանած էր կինը, պատրուակելով թէ վատառողջ է։ Մօտերս ի կախաղան պիտի հանուի նաև Կալէթլի անուն մարդ մը՝ որ ապրուստը կանանց անպարկեշտութեան չնորհիւ կը հայթայթէ եղեր և հատարակաց զբօսավայրի մը մէջ գրաչար մը սպաններ է։ Ի Պիրմինկեմ ալ մեհու պատիժ պիտի կրեն երկու մարդիկ, որ իւրեանց հոմանուհիներն սպաններ են առ նախանձու։

= Վոլհոնիոյ մէջ բնակեալ 2400 և Բիւէվի մէջ հաստատեալ 400 հռոմէական Զեխք ռուսական Օրթոտոքս կրօնքն ընդուներ են, և կըսուի թէ Զեխերուն մէջ այսպիսի կրօնափոխութեան ընդարձակ չարժում մը կերևի։

= Գաղղիոյ Փանն քաղաքին մէջ երկու ազնուական ընտանիքներէ երկու մանկամարդ օրիորդք, մին՝ 18, և միւսը՝ 22 տարեկան, բարեկիրթ երիտասարդի մը աչք անկած լինելով՝ թշնամութիւնն ա՛յնչափ սաստկացեր է իրենց մէջ որ որոշեր են վենամարիլ միշտ ամուսին երիտասարդին։ Այս որոշումն գործադրեր են առաճանակով։ Առաջինը վիրաւորուեր է ձախ թեւէն, իսկ երկրորդը մահացու վէրք մը առեր է կուրծքէն։

= Լէվիչքօ անուն Ռուս գիւղացի մը 17 միլիոն րուպլիի արժէքով դանձ մը երեւան հանած լինելով ըստ օրինաց երկրին պիտի ընդունի մէկերրորդ մասն, 6 միլիոն րուպլի։

= Ալդաս-Լոռէնի գաղղիարէն լրագրաց պատուիրուեր է՝ այսուհետեւ այս գաւառաց տեղական անուններուն գերմաներէնը դրել։

= Գերմանիոյ կայսրն առաջնակայ ամսոյ վերջերը պիտի անցնի ի Վիէննա, Աւստրիոյ կայսեր հետ տեսակցելու համար։

= Ռուսիոյ կայսրն իւր կենդանագիրը ղրկեր է առ կայսրն Գերմանիոյ, ի յիշատակ վերջին տեսակցութեան։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ

×× Եգիպտ. Ազատակար է անչափահաս տղայոց համար։ Բըժիշկք բազում փորձերով հաստատած են թէ ո՛չ միայն տղայոց առողջութեան կը վնասէ եղելն, այլ և նոցա փափուկ ու ակար թոքերուն ղօրանալուն արգելք կը լինի։ Ուստի կը պատուիրեն որ տղայոց թոյլ չտրուի երգել՝ կուրծքը յոգնելու չափ, այլ օրը առ առաւելն մէկ քառորդ կամ կէս ժամու չափ, և աղատ թողլով և բնաւ չբռնադատելով։

××Աղբ կարևոր դեղ մ՚է աւրևէ ղարնուելով մարդոցներու համար։ Եթէ մարդ մը այս վիճակին մէջ գտնուի, աղ ա՛ռ ապուրի դգալով և խառնէ ապուրի դգալ մը ջուրի մէջ։ Այս խառնուրդէն կամիկ կամիկ վազցո՛ւր մարած մարդուն երկու ականջայ մէջ, և ահա իսկոյն մարդուն խելքը գըլուխը կուգայ։

×× Մանանեխը (խարտալ) էքըա պէղիճ կը գործածուի դիպուածով թունաւորելոյ համար։ Գաւաթ մը ջուրի մէջ խառնէ ապուրի դգալ մը ծեծած մանանեխ և խմցո՛ւր թունաւորելոյն. իսկոյն կը փսխէ թունաւորեալն և կազատի թոյնին աղդեցութենէն։

×× Ոտից դրունքն ու ֆըշըհոպէնը կանհետանայ հետևեալ միջոցներով։ Ինչ մը ընկուզենիի տերև ջուրի մէջ խաչէ և պաղեցո՛ւր, և երկու օր առաւօտ և երեկոյ ոտքերն այս ջուրին մէջ լուանալէն ետքը, օրը երկու անգամ չլինի ոտքերն հետևեալ դեղով։ – 3 տրամ ևլէյեքն, 10 տրամ չէլէբոհը և 20 կաթիլ պերկամօթ-բոհը։ Այդն երեքը խառնելու և գործածելու է։ Այս դեղն, առանց երբեք վնաս տալու, անհետ կընէ ոտից քրանիլն ու գարշահոտութիւնն, որոյ պատճառաւ մեծ նեղութիւն կը կրեն շատերը։

Առաջիկայ երկուշաբթի դոց են Օսմանեան կայսերական Պանքայի դրասենեակք ի Պոլիս և ի Գալաթիա։

ՍՓՈՓԱՆՔ ՌԱՄԿԻՆ

Գրեաց Մ՚էհրան Յովհաննէսեան

Զանազան ընտիր քերթուածներ պարունակող կարևոր հրատարակութիւն մ՚է, ընթերցման և ուշի ուշով ընթերցմա՛ն արժանի։ Գինն է 5 ղրուշ։

Մամուլ լսախանեալ զաւեչտաթերթի արուեստակէր Դէկտր Էֆէնտի Ա.յվազեան՝ Միսիլլէն ընտիր ձիթախուղ և օճառ, Թէնեոսէն պատուական գինի և Իզմիրէն ընտիր օղի բերել տուած է, և ժամն գնով կը վաճառէ Գալաթիա Բէնէչէնալիկ-պազար Իսիկ խան։ Առնոյմէ պատ, յատկապէս բերել տուած է Կիպրոսի պատուական գուանոտարիան, Եւրոպոյէն Ժօրժ Սալամն եղբարց ընտիր գոնեաքները թէ՛ չիչերով և թէ՛ տակառով, և Իսկիւտարի ընտիր Զավուշ-իւզ իւմիճէն ձերմակ գինի։ Նաև ամենաընտիր ձիթապտուղ։ Յաճախորդք մեծապէս գոհ կը լինին ասոնց թէ՛ ընտրութեան և թէ՛ ժամանութեան համար։

ՀԱՐՅԱՒՈՐ ԱՐՀԱՍՏԱՆԱՒՈՐ

ԲԱՌԱՐԱՆ

ԲԱՌ 25,000

ՓՈՂ ՏԱՍՆԵՐԿՈՒ ՂՐՇ

Յօրինիչ՝ Ե. ՏԻՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

Հրատարակիչ՝ Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ

Սոյն Ճոռանասէաչ Դրպանի Բառարանն՝ հակառակ իւր փոքր ծաւալին ու համեստ գնոյն՝ կը պարունակէ գրեթէ մեծ բառագրոց չափ բառ և ոճ։ Անձուկ միջոցի մէջ հեղինակն յաջողած է յաճախ գեհեղել աչխարհաբար բառերուն և ոճերուն՝ քով՝ գրաբար համանիշներն ալ, որք անհրաժեշտ են մատենագրական դործոց թարգմանիչներուն։ Ի հարկին բառերուն տակ կերդիններն ալ դրուած են, որպէս և անկանոն արտասանութիւնք։ Սոյն նիւթական ու բարոյական առաւելութիւններէն զատ կարևոր թերի մ՚ալ կը լնու, որուն կցուած է պատմական, աչխարհագրական ու դիցաբանական անուանց բառարան մը։ Բառագիտութիւն վերնագրեալ հատուած մ՚ալ՝ ուր համառօտիւ կաւանդուին բառակազմութեան կանոնք՝ եզական գործ մը կը կացուցանէ զայս։ Գինն է 12 դահեկան։ – Կազմեալ՝ անգղիական հատատուն կազմով։

ԿԻԻԼՏԷՍԹԷԻ

Մ՚ոհամբէդ-ի Ռ՚էյիէ վէ զայէ Ռ՚էյիէ

Սոյն ձեռագիրը նամականին տաճկաբան և թարգման Ա.բիկեան Միհրան էֆէնտիի գործն է, որ քանիցս սպառած լինելով այս անգամ վերստին տպուած է, և կը պարունակէ զանազան Մուրհակ, Պայմանագիր, Փոխանորդագիր, Ընկալագիր, Աղերսագիր, դատական ամեն տեսակ խնդրագիր, Նամակ, Շնորհաւորագիր, Ցանձնարարագիր, Հեռագիր, Կտակագիր, Վկայագիր և այլ խիստ պիտանի դրութիւններ, ընդ ամենը 284 հատ։ Գինն է 6 ղրուշ. ղեղչ կը լինի 20 առ հարիւր։

ԲԱՌԱՄԵՆՅ ՏԵՂԵԿԱԴԻՐ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ

Ս. ՓՐԿՉԻ Ա.ԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

(1883 Յունուար 1—1886 Դեկտ. 31)

—

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ս. ՓՐԿՉԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

Ազգային յիշատակ նկարագիր

Գրեց Բէզճեան Բէնճ

Սոյն երկու հրատարակութիւնք ի միասին կը վաճառին ինձասատ Ս. Փրկչի Հիւանդանոցին, ի գին մէկ քառորդ Օսմանեան ոսկւոյ։ Կեդրոնատեղին է Հիւանդանոցի Հոգաբարձութեան դրասենեակը, Կ. Պոլիս, Մեծ Նոր-Խան, միջնայարկ թիւ 48, 49, 50։ ամէն դրավաճառաց քով կը գտնուին։ Հիւանդանոցի Հոգաբարձութեան կնիքն կրող օրինակներն անվաւեր են։

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՐՏԻԶ

Գ Ր Ե Տ

Տ. Խորէն Արքեպիսկոպոս Մխիթարեան

Աստղնորդ Եթէոյ

Նորին Գերապատուութեան սոյն նոր գործն, որ բնական գիտութեան և բնական պատմութեան վրայ կը խօսի ժողովրդեան հասկանալի լեզուաւ, Զմիւռնիոյ Տէտէեան եղբարց տպարանէն ի լոյս ընծայուած է մաքուր տպագրութեամբ և կը վաճառուի բոլոր դրավաճառաց քով ի դին 7 դահեկան։

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԵՒ

ԱՂԹԱՄԱՐ ՈՒ ՍԻՍ

Գեր. Տ. Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրլեան գրած է Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ ընդհանրական հայրապետութեան, և Աղթամարայ ու Սսոյ կաթուղիկոսութեանց հաստատութեան, իրաւասութեան և պարտուց ու պաչտաման վրայ, պատմութեամբք արձանագրութեամբք և հին ու նոր վաւերական պաչտօնագրովք հաստատելով զամենայն։ Ընթերցողն լիուլի ծանօթանալ կուտայ Հայաստանեայց Հայրապետութեան և Աղթամարայ ու Սսոյ անցեալ և ժամանակակից վիճակաց վրայ։ Գեր. Իզմիրլեան քաջ հետազօտած ու խնամատարած է զայս ամենայն, և լուսաւոր ծանօթութիւններ կընծայէ հետաքննին Հայոց։ Գրքին սկիզբը դրուած ցանկը աչքէ անցուցողն պիտի տեսնէ, թէ ո՛րչափ նշանաւոր անցքեր նշանակեալ են խնամով, և քանի՛ նուիրական ու մեծարելի է Հայկական հարստութեանց միակ մնացորդն եղող Հայրապետութիւնն։ Կարժէ, որ ամէն Հայ թանգարանի մէջ գլխաւոր տեղ մը բռնէ այս Գիրքը։

Կը տնօրինէ տպչրոյս դրասենեակը, Կ. Պոլիս Պալըդ-բազար Նաքիյէ-խան վերի յարկ թիւ 16. Պաղէ-գարու Ջրավաճառ Պօղոս աղայի խանութը։ Կը բաղկանայ 1300 երեսէ։

PILULES HOLLOWAY

ԴԵՂԱՏԷՍՏ ՀՈՒԼԼՕՈՒԷԻ

Լեարդի, ստամոքսի և աղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահատը, և ամեն չղային տկարութեան, ուժաթափութեան և տխրութեան համար. կը չնչէ և անհետ կընէ ամեն տեսակ անչափաւորութեանց հետքերը։ Սըրտի և երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մը ունի. արիւնը մաքրելով՝ նոյա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ և դրդրելով կենսական գործարանները կը զօրացնէ։ Իւր դեղական մեծ ազդեցութեամբ սրատախտութիւն, կծուութիւն, մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ լցուած կազեր, գլխի ցաւեր կվանէ, մարսողութիւնը կչափաւորի, և մարմինը մաքրուելով բոլոր այն ախտերն որ չատ անգամ զանազան հիւանդութեանց սկզբնապատճառ կըլլան, առողջ՝ ուժեղ և բնական դիրքը կզգենու։

ONCUENT HOLLOWAY

ՍՊԵՂԱՆԻ ՀՈՒԼԼՕՈՒԷԻ

Մարթային հիւանդութիւն և վէրք բուժելու մասին ունեցած պալատական յատկութեանցը չհատասարիր բնաւ ուրիշ դեղ մը. հին կամ նոր թունաւոր վէրքեր, ուռեցք, քաղցկեղ (շիրիմնէճէկ), որուններ և սաեանց վէրքեր կա՛մ բոլորովին կանցնին և կա՛մ կլաւանան. օգտակար է նաև հարբուխի, հազի, սրտի բաբախման, մանաւանդ յօդացաւ (եէկ) ըսուած հիւանդութեան։ Իւր կաղդուրիչ և զօրաւոր ազդեցութեամբը խոյլ (սըրտաձայ) հիւանդութեան ապականիչ դրութիւնը ինչ աստիճան որ ըլլայ կը դիմադրաէ։

Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տփի վրայ, որ կը գտնուի ամեն դեղավաճառներու քով, և մասնաւորապէս Պաղէ-գարու Թաչ-խանի կողմերը Պ. Գասպարեանի դեղարանը, Թիւ 7, կը ծախուի։

Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ հեղինակն ուսքիւտար Հոլլոուէյ ի Լոնտոն Օքսֆորտ փողոց Թիւ 533։

ՏՆՕՐԻՆ ԵՒ ՏԷՐ

Հ. Ս. Ա.Լ.Ա.ՁԱ.Ձ.Ե.Ա.Ն

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՐԱՊԵՏ ՊԻՊԻՐԵԱՆ
Կ. Պոլիս Զիչէք-բազար Թիւ 23